Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավար
պարոն Նորայր Սարգսյանին
"ՆԱՆԻ" ստուդիայի
գեղ.ղեկ.՝ Նարինե Մկրտչյանից (077.682007)
04.06.2025թ.

# ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Սարգսյան ես հանդիսանալով "Նանի" ստուդիայի գեղարվեստական ղեկավար և Եղվարդ քաղաքի Մշակույթի տան պարուսույց խնդրանքով դիմում ենք Ձեզ իմ և աշակերտներիս ծնողների անունից Ձեր աջակցությունը մեր սաների մասնակցության ապահովման հարցում՝ Վրաստանի Հանրապետության Բաթումի քաղաքում կայանալիք միջազգային մեծ պարային մրցույթին: Միջոցառումը կարևոր հնարավորություն է մեր երեխաների մշակութային զարգացման և Եղվարդ համայնքը միջազգային հարթակում պատշաճ ներկայացնելու տեսանկյունից:

Մրցութային միջոցառմանն ընդգրկված է **45** մասնակից, որոնց ծնողները տվել են իրենց գրավոր համաձայնությունը՝ կից ներկայացված ստորագրություններով: Մրցույթին մասնակցությունը ենթադրում է ուղևորության, կեցության և կազմակերպչական վճարների ծախսեր, ինչը դժվարություն է ներկայացնում ծնողների համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրում եմ հնարավորության սահմաններում տրամադրել դրամական օժանդակություն՝ մրցույթին երկու խմբերի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար:

Վստահ եմ, որ Ձեր կողմից ցուցաբերվելիք աջակցությունը կնպաստի ոչ միայն երեխաների մշակութային հմտությունների զարգացմանը, այլև կխթանի Եղվարդ համայնքի դրական ընկալումը միջազգային հարթակներում:

Կանխավ շնորհակալություն եմ հայտնում ուշադրության և հնարավոր աջակցության համար:

Հարգանքով՝ Նարինե Մկրտչյան
Կցվում է մասնակիցների ծնողների ստորագրություններով ցուցակը:

ՆԱՆԻ ՍՏՈՒԴԻԱ NANI STUDIO НАНИ СТУДИЯ ՀՎՀՀ 43248633

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆԱԻՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔ Թիվ 1982